ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԱՐՇԱԿ ԵՐԿՐՈՐԴԻ ԿԵՆՏՐՈՆԱՁԻԳ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ*

Ավետիս Հարությունյան, Արշակ Ներսիսյան

Բանալի բառեր՝ Արշակ Երկրորդ, Ներսես Մեծ, Աշտիշատի ժողով, Շապուհ, հայոց եկեղեցի, քահանայապետ, Հռոմ, Պարսկաստան, կենտրոնաձիգ պետություն, Արշակավան, ավատատիրական հարաբերություններ:

Տիրանի գահից հրաժարվելուց հետո նրան փոխարինած որդին՝ Արշակ Երկրորդն Արշակունյաց հարստության հերոսական և ողբերգական դեմքերից է, մարդ, որն իր ամբողջ գահակալության շրջանում փորձեց վերականգնել Մեծ Հայքի հզորությունը, ընտրեց հավասարակշռված և խուսանավողական քաղաքականություն Հռոմի և Պարսկաստանի միջև, կարողացավ զսպել ներքին դավադիր ուժերին և կարելի է պնդել, որ հասավ հաջողության, բայց, ցավոք, զոհ գնաց Շապուհի խարդավանքներին, մի անձի, որն իրենից փաստորեն պարտվել էր: Արշակի գործունեության ուսումնասիրությունը հաճախ այն տպավորությունն է ներշնչել, որ նա եղել է հակասական անձ և դրանում իր դերն է ունեցել հայ պատմիչների կողմնակալ վերաբերմունքը, բայց խորքային ընկալման արդյունքում հանձին նրա հառնում է խելացի պետական գործչի և դիվանագետի, մեծ հայրենասերի և պետականամետ անձի վառ կերպարը: Քանի որ մեր հիմնական նպատակը 4 – րդ դարում պետության և եկեղեցու հարաբերությունների քննությունն է, ապա փորձենք Արշակի քաղաքական դիմագիծն ամբողջացնել նաև եկեղեցու և քահանայապետի հարաբերությունների համադրական քննությամբ: Արշակունյաց գահին բազմելով 350թ., Արշակն իր գահակալության առաջին տասնամյակում, երբ երկրում գլխավորապես խաղաղություն էր իշխում, ձեռնամուխ է լինում դաշնակցային հարաբերությունների ստեղծմանը Հռոմի հետ՝ Կոստանդիանոս կայսեր մոտ ուղարկելով մի պատվիրակություն, որի կազմում էր նաև այդ ժամանակ արքունի սենեկապետ, Հուսիկ քահանայապետի թոռ Ներսեսը՝ Աթանագինեսի որդին: Դա պայմանավորված էր նաև նրանով, որ Շապուհն իր երկրի հյուսիս – արևելքում պատերազմ էր վարում քուշանների դեմ և Մեծ Հայքը կենտրոնական տեղ առայժմ չէր զբաղեցնում նրա քաղաքական ձգտումներում: Պատվիրակությունը բաղկացած էր տասը հոգուց: Դժվար է պնդել, թե կոնկրետ ի՞նչ համաձայնություն են ձեռք բերել, որովհետև այդ մասին ստույգ վկայություն չկա, բայց մի բան կարելի է ենթադրել, որ Կոստանդիանոսը, որը փաստորեն նոր էր միավորել Հռոմը՝ պարտության մատնելով Մագնենտիասին, նրանց ջերմորեն է ընդունել: Պատվիրակությունը հետ է վերադառնում՝ իր հետ բերելով կայսեր թանկարժեք նվերներն Արշակին, ինչպես նաև՝ այնտեղ որպես պատանդներ պահվող Տիրիթին ու Գնելին և իր սպանված եղբոր Կոստասի այրուն՝ Օլիմպիային, որպես կին Արշակին: Այս ամենը ենթադրել է տալիս, որ Մեծ Հայքի և Հռոմի միջև ձևավորվում էին բարեկամական հարաբերություններ: Տարբեր կարծիքներ կան այն մասին, թե ո՞ր թվականին է Հռոմ մեկնել այս պատվիրակությունը: Մենք կարծում ենք, որ 353 – ին՝ Կոստանդիանոսի հաղթանակից շատ չանցած: Մարկվար-

---

* Հոդվածն ընդունվել է 05.10.21:
Հոդվածը տպագրության է երաշխավորել պ.գ.դ., ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր Ա. Ներսիսյանը: 11.10.21:

տը գտնում է, որ դա տեղի է ունեցել 357 –ին[1]: Բայց դա հնարավոր էր միայն 353 – ին, որովհետև մի բան ակնհայտ է, որ Ներսեսը 354 – ին արդեն քահանայապետ էր և մեկնել էր Հռոմ՝ սենեկապետ լինելու ընթացքում, ուրեմն՝ դա կարող էր լինել մինչև 354 թվականը: Ցանկանում ենք շեշտել, որ այս պատվիրակության Հռոմ մեկնելն ամենևին չպետք է ենթադրի Արշակի կողմից վերջինիս հովանավորությունը ձեռք բերելու ձգտում, այլ՝ դաշնակցային հարաբերությունների ստեղծում: Հակառակ դեպքում նա չէր չեզոքացնի բոլոր այն վտանգները, որոնք տեսնում էր իր իշխանությունը ներքուստ թուլացնել փորձող Հռոմի քաղաքականության մեջ, որի իրականացնողներից մեկն էլ իր եղբորորդի Գնել Արշակունին էր:

Արշակի կերպարի Լեոյի բնութագրումներում հանդիպում ենք հակասական մոտեցումների, որոնցից հատկապես հետաքրքիր է հետևյալ ընդհանրացումը. «Անշուշտ, Արշակը սովորական բնավորություններից չէր և ներկայացնում էր բավական բարդ մի ներքին աշխարհ, ուր տվյալներ կային թե՛ պետական առաքինությունների, և թե՛ մանր անձնահաճ կրքերի համար: Ընդհանուր առմամբ՝ դա մի տիպար պարթև էր՝ այս տոհմին հատուկ առաքինություններով և արատներով, որոնց մեջ առանձնապես շեշտվում էին բռնավորական ոճրագործ կրքերը: Պակասությունների մի մասը, անշուշտ, հետևանք էր թագավորի թուլության: Թեև ազգային զրույցները վերագրում են Արշակին նույնիսկ անհնարին զինվորական մեծագործություններ, բայց վերջ ի վերջո, անհերքելի էր մնում, որ նա իր հայր Տիրանից բարձր չէր իբրև զինվորական գործիչ, իսկ զրույցները, որոնք, օրինակ, հավաստում են թե Արշակն անընդհատ 30 տարի կռվեց Շապուհի դեմ և միշտ հաղթեց նրան, պարզ առասպելներ են, որոնք ոչինչ նշանակություն ունենալ չեն կարող» [2]:

«Անձնահաճ կրքերը» մահկանացուներին բնորոշ են, մանավանդ ոչ հասարակ, իսկ ինչ վերաբերվում է մնացյալին, ապա անհնար է համաձայնվել Լեոյի հետ: Արշակն, իրոք, որպես զինվորական հնարավոր է չէր փայլում, զորահրամանատարի գործը տվյալ պահին Վասակ Մամիկոնյանինն էր, բայց որպես դիվանագետ և քաղաքական գործիչ, նա բացառիկ տեղ է գբաղեցնում Արշակունյաց արքայատոհմի պատմության մեջ: Եվ, իրոք, ամենևին չափազանցություն չէ, որ նա հաղթել է Շապուհին թե՛ դիվանագիտական, և թե՛ ռազմի դաշտում: Նրա դավադրական սպանությունը Շապուհի պարտության վկայությունն է: Թե՛ պետական այր և կառավարիչ, և թե՛ արտաքին լուրջ խաղացող Արշակն ավելի շատ տառապել է ներքին անմիաբանությունից, որում պակաս դեր չի ունեցել նաև Ներսեսը: Դա ավելի ուշ, բայց նրա կառավարման առաջին փուլում՝ 350 – 57թթ., պետության կառուցման և ամրապնդման ջանքերը միանգամայնորեն արդյունավետ էին, իսկ երբ վերստին սրվեցին Շապուհի դավերը, ներքին միաբանության փոխարեն հայ բազում իշխանների կամ նախարարների մոտ առաջացավ նրան դավաճանելու ցանկություն: Դրանց պատճառների մեջ չկա մի այնպիսի կետ, որն արդարացնող կարող է լինել դավադիրների համար: Բայց այս մասին այլ առիթով: Այժմ փորձենք վերլուծել նրա և Ներսեսի հարաբերությունները 350 – ական թթ., երբ դեռևս նրանց միջև համերաշխությունն էր իշխում: Կարելի է պնդել, որ մինչև 359թ., երբ վերսկսվեցին պատերազմները Հռոմի և Պարսկաստանի միջև, Արշակը ձեռնամուխ է լինում ներքին կազմակերպչական հարցերի՝ միտված կենտրոնածիգ պետության ստեղծմանը: Հասարակության ներքին պառակտվածության համահարթման խնդրում մեծ դեր ուներ կրոնական գաղափարախոսությունը, որը հանձին Քրիստոնեության՝ արմատացած չէր: Մինչ այդ առումով քայլերի գնալը, Արշակը նրբորեն խաղաց Հռոմի և Պարսկաստանի միջև՝ իրեն երկուսին էլ ցույց տալով բարեկամ: Թերևս դրանով պետք է պայմանավորել Փավստոսի հետևյալ տողերը. «Այն ժամանակ մեծ խաղաղություն հաստատվեց: Հայոց աշխարհի բոլոր մարդիկ, որոնք կորել էին, փախել ու թաք էին կացել, հավաքվեցին և ապահով ու խաղաղ ապրեցին Արշակ թագավորի հովանավորության տակ: Աշխարհն

էլ երկու թագավորների (հռոմեական և պարսկական – Ա. Հ., Ա. Ն.) միջև խաղաղվեց, բարեկարգվեց, և այնուհետև (մարդիկ) բնակվում էին խաղաղությամբ, յուրաքանչյուրը վայելում էր իր ունեցվածքն ու արդյունքը» [3]:

Այսինքն՝ խուսանավելու քաղաքականության ընտրությամբ նա իր ժողովրդի համար ապահովում էր խաղաղություն: Իսկ որ երկիրը ներսից էլ է ուժեղացրել, բավական է նույն Փավստոսի հետևյալ վկայությունը. «Թագավորը Վարդանին՝ (Մամիկոնյան –Ա. Հ., Ա. Ն.) ավագ եղբորը նշանակեց նրանց ցեղի նահապետ, միջին եղբորը՝ Վասակին, իր դայակին, նշանակեց սպարապետ և զորավար պատերազմական գործերում, նույնպես և կրտսերին նշանակեց զորապետ: Նույնպես և մյուս մեծամեծ նահապետների զորքերին ըստ իրենց աստիճանների հաստատեց՝ ինչպես թագավորների ժամանակ եղել էր: Մեծամեծներին էլ հնազանդության էր բերում, բոլորի զորքերը կողմերի վրա բաշխելով՝ Հայաստանի վրա սահմանապահ էր նշանակում» [4]:

Ինչպես համոզվում ենք՝ նա վերականգնում էր պետական մեքենան, սիրաշահման և պարտադրելու քաղաքականությամբ ներքուստ ամրապնդում էր իր երկիրը: Այս ամենի արդյունքում էր, որ «Հայաստան աշխարհի թագավորությունը նորոգվեց ու պայծառացավ, ինչպես առաջ. մեծամեծներն իրենց գահերում, գործակալներն իրենց աստիճաններում» [5]:

Պետական կառավարման համակարգը կուռ և ամրապինդ դարձնելուց հետո, Արշակն անցնում է եկեղեցուն, որի վիճակը Տիրանի գահից հրաժարվելուց հետո, մեղմ ասած, այնքան էլ մխիթարական չէր: Եվ ահա, ինչպես վկայում է Խորենացին՝ «Արշակի թագավորության երրորդ տարում հայոց եպիսկոպոսապետ եղավ Աթանագինեսի որդի Մեծ Ներսեսը»[6]: Քրիստոնեության՝ Մեծ Հայքում ունեցած գաղափարական աշխարհագրության վերաբերյալ ընդունելի տեսակետ է արտահայտում Լեոն, գրելով, որ Ներսեսի «նախահայրերը – Գրիգոր Լուսավորիչ, Արիստակես, Վրթանես, Հուսիկ, քրիստոնեությունը տարածելու և պահպանելու համար գլխավորապես ստիպողական միջոցներ էին գործադրում՝ հրամանի, բռնի հարկադրանքի, իշխանական ուժի միջոցները: Կյանքը ցույց տվեց, որ այդ բավական չէ, նույնիսկ շատ քիչ է. քրիստոնեությունն իր ուժը կարող էր ծավալել միայն այն դեպքում, երբ նա հաստատված էր ժողովրդական գիտակցության մեջ: Այս ճշմարտության իրականացումն էր Ներսեսը դարձնում իր գործունեության հիմնաքար: Ժողովրդականացնել նոր կրոնը, ներկայացնելով նրան իբրև ընկերական կյանքի բարեկարգության աղբյուր – ահա Ներսեսի քաղաքականության կենտրոնը» [7]: Նույն տեսակետն է արտահայտում նաև Օրմանյանը, որի հետ համաձայնվում է Լեոն՝ գրելով վերոհիշյալը[8]: Այսպիսով, ստացվում է, որ Քրիստոնեական գաղափարախոսությունն հայոց մեջ ուներ աշխարհագրական նեղ շրջանակներ: Իսկ ընդլայնե՞ց արդյոք այն Ներսեսը: Կարելի է պնդել, որ մասամբ միայն: Մինչ այդ՝ մի փոքր նրա քահանայապետ դառնալու հանգամանքների մասին: Ինչպես նշեցինք, նա Հուսիկի թոռն էր՝ Աթանագինեսի որդին: Լեոն, հենվելով մի սկզբնաղբյուրի վրա[9], գրում է, որ եթե վերջինիս հավատանք, Ներսեսը Մամիկոնյանների փեսան էր, ամուսնացած Վարդանի աղջկա հետ, որ կոչվում էր Սանդուխտ և վախճանվել էր երիտասարդ հասակում՝ թողնելով մի հատիկ արու զավակ՝ Սահակ անունով[10]:

Կարելի է ենթադրել, որ Ներսեսի քահանայապետ լինելով շահագրգռված է եղել Հռոմը: Իսկ Արշակը չի ընդդիմացել, քանի որ այդ ընթացքում ամենևին իր շահերից չէր բխում վերջինիս հակադրվելը, մանավանդ, որ երկիրն ապրում էր խաղաղության և պետական շինարարության շրջան: Ներսեսի ընտրության առիթով բավական ընդարձակ ներբող է գրում Փավստոսը, որի համար այս կերպարն առհասարակ անհամեմատելի է ներկայացվում այլոց հետ՝ իր մեծությամբ և առաքինությամբ: Ըստ նրա՝ Ներսեսն սկզբում ընդդիմանում է, ապա նոր միայն Արշակի հարկադրանքով ընդունում է առաջարկը՝ 353 – ին մեծ շուքով առաքվելով Կեսարիա և ձեռնադրվելով հայոց քահանայապետ: Թերևս Արշակը մտածել է, որ հանձին վերջինիս կունենա աջակից այն

կարևոր գործում, որին ձեռնամուխ էր եղել՝ այսինքն՝ կենտրոնաձիգ պետության ստեղծման: Քահանայապետ ընտրվելու հաջորդ տարին՝ 354 – ին, գումարվում է Աշտիշատի հայտնի եկեղեցական ժողովը: Ընդհանրապես այն տպավորությունը կա, թե սրա նախաձեռնողը Ներսեսն է եղել, բայց դա անհնար էր առանց Արշակի համաձայնության, մանավանդ, որ դեռևս նրա դիրքերն ամուր չէին: Աշտիշատի ժողովի մասին շատ է գրվել: Գնալով դրան՝ արքան և քահանայապետն, անշուշտ, ցանկացել են նպաստել ժողովրդի մեջ Քրիստոնեության ընդհանրացմանը: Իսկ դա չէր կարող չծառայել ի նպաստ պետության հզորացման, մանավանդ, երբ հոգևոր և աշխարհիկ իշխանությունները միաձույլ լինեին: Մենք ճիշտ ենք համարում այս ժողովի որոշումները քննության ենթարկել ըստ պատմահոր տեղեկությունների, որոնք զերծ են փավստոսյան զեղումներից և ավելի կոնկրետ են ու ստույգ: «Նա եպիսկոպոսների և աշխարհականների(փաստ, որ իրոք այս ժողովը չէր կարող տեղի ունեցած լինել առանց Արշակի համաձայնության – Ա.Հ, Ա.Ն.) ժողով գումարեց, կանոնական սահմաններով հաստատեց ողորմածությունը, արմատախիլ արեց անգթությունը, որ մեր երկրում ի բնե սովորական էր: Որովհետև բորոտները հալածվում էին՝ իբրև օրենքով պիղծ ճանաչված մարդիկ, ուրուկներին էլ փախուստի էին ենթարկում, որպեսզի ախտը նրանցից ուրիշների վրա չփոխադրվի, նրանց կացարաններն անապատներն էին և ամայի տեղերը, նրանց ծածկույթը քարերն ու մացառները, իրենց թշվառության մեջ նրանք ոչ ոքից մխիթարություն չէին գտնում: Բացի դրանցից, հաշմանդամները հյուրեր չէին ընդունում, օտարականները պաշտպանություն չէին գտնում»[11]:

Պատմահոր այս տեղեկությունից հետևյալ եզրակացությունը լրիվ տեղին կլինի՝ նրա մատնանշած այս խնդիրները պետության և ոչ թե եկեղեցու լուծելիքն էին, որը նշանակում է, որ Աշտիշատի ժողովը հետամուտ չէր միայն հավատի խնդիրներ ամրապնդելու, այլ պետականորեն կարգավորելու այս հարցերը: Հիվանդներից ախտը չտարածվելու համար որոշվում է նրանց կացարաններ տալ և փաստորեն մեկուսացնել և խնամել: Իսկ ո՞վ էր դա անելու՝ եկեղեցի՞ն: Պատմահորն ուշադիր ընթերցումը բոլորովին այլ եզրակացության է մղում: Այսպես, նա գրում է.« Իսկ նա հրամայեց, որ ամեն մի գավառում շինեն աղքատանոցներ առանձնացած անբնակ տեղերում, որպեսզի հունաց հիվանդանոցների նման մխիթարություն լինեն մարմնով վշտացածներին: Այս (հիվանդանոցների) վրա բաշխեց ավանները և ագարակները, որպեսզի իրենց արտերի արդյունքներից, արածող անասունների կթից ու բրդից բաժին հանեն և պարտավորաբար նրանց պետքերը հոգան հեռվից հեռու, իսկ նրանք դուրս չգան իրենց բնակության շենքերից» [12]:

Եզրակացությունը մեկն է՝ այս ախտավորները, որոնք ցրված էին երկրով մեկ, հավաքվում են հատուկ հիվանդանոցներում, մեկուսացվում են, իսկ նրանց ծախսերը պետք է հոգային ավանների և ագարակների բնակիչներն՝ իրենց միջոցներից: Ստացվում է, որ վերջիններս, որոնք, բնականաբար, չէին պատկանում եկեղեցուն, փաստորեն, բնամթերային հարկի մի տեսակով պահում էին սրանց՝ առանց շփվելու: Ուրեմն, սրանց հոգսը եկեղեցու վրա չէր դրվում, ինչպես ընդունված է պնդել պատմագրության մեջ: Հնարավոր է՝ ավելի ուշ, երբ ընդլայնվում են եկեղեցական տիրույթները, այս ագարակներից կամ ավաններից շատերը պատկանել են եկեղեցուն, որոնց մեծ մասը խլեց Պապը:

Այսպիսով, սա աշխարհիկ և հոգևորական ժողովականների որոշումն էր կամ Արշակի և Ներսեսի, որն, անշուշտ ճիշտ էր:

Ժողովը նաև որոշում է գյուղերում որբերի և ծերերի համար կառուցել իջևաններ, անմարդաբնակ տեղերում՝ եղբայրանոցներ և մենաստաններ, մենակյացների համար՝ խրճիթներ:

Աշտիշատի ժողովի որոշումներից հատկապես պետք է կարևորել նրանք, որոնցով արգելվում էր «խնամիությունը մերձավոր ազգականների միջև, որ գործադրում

էին սեպուհական ազնվականության համար աչք տնկելով և երկրորդ՝ որ մեռածների վրա ոճիրներ էին գործում հեթանոսական սովորությամբ»[13]:

«Սեպուհական ազնվականության համար աչք տնկելը» նշանակում էր վերացնել հողերի մասնատումը և խրախուսել խոշոր հողատիրության զարգացումը, այսինքն՝ դրանք չէին տրոհվում մանր հողակտորների, որոնք անցնում էին սեպուհներին՝ որպես ցմահ կամ ժառանգական սեփականություն: Որոշումներ են կայացվում նաև եկեղեցական սեփականության տրոհումները վերացնելու առումով: Փոքրասիական մի շարք քրիստոնյա երկրների օրինակով վանքեր են հիմնվում կուսակրոն միաբանների համար: Սահմանվում է կարգ, որ կուսակրոն միաբանի մահից հետո նրա հողը և ունեցվածքն անցնում է վանքին: Այս որոշումից առաջ բոլոր բարձրաստիճան հոգևորականները, այդ թվում քահանայապետն, իրավունք ունեին ամուսնանալու և ընտանիք կազմելու, իսկ այժմ դա արգելվեց՝ եկեղեցական կալվածքների մեծացման միտումով, քանի որ դրանք չէին տրոհվում այլևս և մնում էին միայն եկեղեցուն[14]:

Այսպիսով, ենթադրությունը մեկն է՝ Ներսես Մեծը բարեգործական հիմնարկություններ ստեղծելով, մյուս կողմից՝ ընդլայնման հիմք էր ստեղծում եկեղեցական կալվածքների համար, որն աստիճանաբար պետության մեջ դառնում էր հզոր կառույց, որն արդյունքում չէր կարող չհանգեցնել նրա և Արշակի միջև հարաբերությունների սառեցմանը: Կուսանոցների բացումը նույնպես չէր կարող չթուլացնել պետությունը, որովհետև դրանք նույնպես «ստանում էին հողային սեփականություններ՝ հարուստ՝ ուրեմն և ազդեցիկ լինելու և իրենց միաբանների բանակը կերակրելու համար»[15]: Փաստորեն, ստացվում է, որ կուսանոցների բացումը նույնպես եկեղեցական կալվածքների ընդլայնմամբ էր նաև պայմանավորված: Գնահատելի է Ներսես Մեծի քայլը՝ գավառներում դպրոցներ բացելու տեսանկյունից, բայց այնտեղ սովորում էին հունարեն և ասորերեն լեզուներով, որը դժվար է պնդել, թե ինչով էր նպաստելու ժողովրդի ազգային անվտանգության ամրապնդմանը: Այս առումով նա փաստորեն կրկնում էր Գրիգոր քահանայապետի քայլը: Թերևս հունարեն դպրոցների բացելը պետք է պայմանավորել նրա հռոմեական կողմնորոշմամբ, որն ունենալու առումով կասկած լինել չի կարող: Աշտիշատի ժողովից հետո կարծես թե աստիճանաբար սրվում են Արշակի և Ներսեսի հարաբերությունները, որովհետև եթե վերջինս ցանկանում էր ստեղծել Հռոմից և Պարսկաստանից անկախ և ուժեղ քաղաքական միավոր, ապա Ներսեսը փնտրում էր հովանավորություն Հռոմում, բացի այդ՝ կարծես լուռ մրցակցության մեջ էր արքայի հետ: Կենտրոնախույս ձգտումների ակտիվացման դիմակայման և անկախության պահպանմանը միտված քայլ պետք է համարել Արշակի կողմից Արշակավանի հիմնադրումը, որի մասին պատմիչները թշնամաբար են գրում և որին փաստորեն դեմ է եղել քահանայապետը: Մինչև այդ դեպքերին անդրադառնալն ու դրանց հանդեպ Ներսես Մեծի դիրքորոշման ճշգրտումը, ցանկանում ենք շեշտել, որ ինքնուրույն պետականության ստեղծման գործում Արշակի կողքին էր Հայր Մարդպետը: Մարդպետները թեև պատմիչների կողմից ներկայացվում են բացասական գույներով, բայց գլխավորապես, որոշ բացառություններով, եղել են անկախ պետականության ջատագով գործիչներ: Այդ մասին բավական հետաքրքիր է Փավստոսի մեկ վկայությունը: «Եվ Հայր Մարդպետը, - գրում է նա,- չար ու չարամիտ մարդ էր, ավելի անօրեն և անիրավ, քան նախկին Հայր մարդպետները: Սա էր, որ Տիրանի թագավորության ժամանակ կոտորեց բոլոր նախարարական ցեղերը և այսպես Արշակի թագավորության ժամանակ շատ ավելի չարիքներ էր գործում բոլոր մարդկանց նկատմամբ, քան առաջ» [16]:

Սա Փավստոսը պատահաբար չի գրում, որովհետև վերջինս փորձում է հանդես գալ ընդդեմ եկեղեցու օրեցօր ծավալվող հզորության: Մի անգամ, երբ նա, որն ի պաշտոնե նաև արքունի ոստանի կառավարիչն էր, մեկնում է Տարոն՝ իր գյուղերը տեսնելու, հանդիպում է «Իր սեփական իշխանության մեջ» շրջող Ներսեսին: Վերջինիս հետ ճաշելուց հետո նա բարձրաձայնում է իր մտքերն այն մասին, որ Աշտիշատի պես գե-

ղեցիկ վայրը տնօրինում են կանանց շորեր հագած հոգևորականները՝ սպառնալով դրանք գրավել հարքունիս: Սակայն, չի կարողանում իրականացնել իր մտածածը, որովհետև դավադրաբար սպանվում է Շավասպ Արծրունու կողմից[17]:

Սա մի փաստ է՝ վկայող այն մասին, որ իրոք պետականամետ մարդիկ հասկանում էին, թե ինչքան է ուռճացել եկեղեցին՝ ի վնաս կենտրոնաձիգ պետության:

Արշակի հարաբերությունները Ներսեսի հետ ավելի են վատթարանում նրա կողմից իր եղբորորդու՝ Գնել Արշակունու սպանությունից հետո: Վերջինս Արշակի՝ Հռոմում պատանդ պահվող եղբոր՝ Տրդատի որդին էր, որին սպանել էր կայսրը: Ապա՝ զղջալով, Գնելին ուղարկել էր Հայաստան՝ տալով հյուպատոսի կոչում: Ըստ Խորենացու՝ նրան իր հետ բերում է Արշակի կողմից այնտեղ ուղարկված Ներսեսը[18]:

Կարելի է ենթադրել, որ Գնելի Հայաստան ուղարկվելը հենց այնպես չի եղել: Նրա՝ լայն արտոնություններով գործունեությունը թերևս ունեցել է մեկ հիմնական նպատակ՝ չեզոքացնել Արշակին, որը վարում էր անկախ քաղաքականություն և Մեծ Հայքը գցել Հռոմի ազդեցության տակ: Դրա վկայությունն է այն, որ Գնելը հաստատվում է Այրարատում, ուր պետք է, համաձայն օրենքի, բնակվեր միայն թագավորը և նրա այն որդին, որը ժառանգելու էր գահը[19]:

Արշակը Գնելին դիտել է որպես իր համար քաղաքական հակառակորդ, որով պետք է պայմանավորել նրա սպանության կազմակերպումը Կոգհովիտ գավառում: Իսկ ինչ վերաբերվում է նրան, որ պատմիչներն այս սպանությունը կապում են Տիրիթի և Վարդանի խառնակչական քայլերի և Արշակի մոտ Գնելի վարկաբեկման հետ, ապա հնարավոր է, որ այդպիսի բան եղած լինի, բայց դա չէր կարող սպանության շարժառիթ հանդիսանալ: Սպանությունը, Փառանձեմին տիրանալով պայմանավորելը, նույնպես չի հիմնավորվում, որովհետև փաստերը մղում են այն եզրակացության, որ նա Փառանձեմին տեսել է Գնելի սպանությունից հետո միայն[20]:

Գնելի մահը ծանր է տանում Ներսես մեծը, որը «գնաց սուգ նստեց երկար օրեր, ինչպես Սամվելը Սավուղի համար» [21]:

Մի բան ակնհայտ է, որ գնում էր կողմնորոշումների պայքար, որոնց դեմ էր խուսանավողական գործելաոճ ընտրած Արշակը, որն այս շրջանում արդեն փորձում էր դրացիական հարաբերություններ ստեղծել Շապուհի հետ, որում կարծես թե հաջողվում է:

Կենտրոնախույս ձգտումների դեմ պայքարով և խոշոր հողատերերին թուլացնելու ցանկությամբ պետք է պայմանավորել նաև Արշակի կողմից Արշակավան քաղաքի կառուցումը Մասիսի հարավային լանջի վրա, Կոգհովիտ գավառում: Այս ձեռնարկը պատմիչներն համարել են անմիտ, թեպետ, երբ խորքային առումով մոտենում ենք խնդրին, համոզվում ենք, որ դա հանճարեղ արարք էր, քանի որ թուլացնում էր խոշոր նախարարներին և եկեղեցուն: Արշակավանում, համաձայն Հ. Մանանդյանի, ավելի շատ հաստատվել են ճորտ գյուղացիները[22]: Իսկ դրանց փախուստը տնտեսապես թուլացնում էր խոշոր հողատերերին: Արշակավանի տեղի ընտրությունը կարևոր էր նաև նրանով, որ այստեղ էին հատվում հյուսիսից դեպի Միջագետք և Հայաստանից Սև ծովի ափերը տանող ճանապարհները[23]:

Արշակավանի հետ կատարվածի մանրամասներին չենք ուզում անդրադառնալ: Նշենք միայն, որ այս քաղաքի հայ նախարարների կողմից կործանումը վկայում էր այն մասին, թե որքանով էր անձնական սեփականությանը ստորադասվում անկախ պետականության ամրապնդման գաղափարը: Փաստերից կարելի է եզրակացնել, որ Արշակավանի կառուցումը չի ողջունել Ներսես Մեծը: Պատմահայրը գրում է.« Այս բանը թեպետ իմացավ Մեծ Ներսեսը, բայց չկարողացավ կոտորածից առաջ հասնել, այլ հասավ վերջում, երբ կոտորվածների երեխաներին ուզում էին գերի տանել, ինչպես հեռավոր թշնամիների երեխաների: Մեծ Ներսեսը նրանց ազատեց և հրամայեց քթոցներով կրել մի գոմ: Նրանց համար սնուցիչներ և սնունդ նշանակեց: Հետո նրանք (մեծա-

նալով) ավան կազմեցին, որ այս պատճառով կոչվեց Որթք (քթոցներ)» [24]:

Այսպիսով՝ ակնհայտ է, որ Ներսես Մեծը իմացել է այս դավադրության մասին: Հակառակն անհնար էր, որովհետև քաղաքի կառուցումն Արշակը սկսել էր նրա՝ Հռոմում լինելու ընթացքում, իսկ իրեն փոխանորդ նշանակած Խադն առաջինն էր, որ դրա համար քննադատեց Արշակին, ինչի մասին գրում է Փավստոսը[25]: Ուրեմն, Ներսեսն այդ մասին գիտեր, բայց եկեղեցապատկան ճորտերի փախուստն, անշուշտ, նրա շահերից չէր բխում:

Սիա այսպիսի բուռն պայքար էր ընթանում Արշակի կենտրոնաձիգ պետություն ստեղծելու ձգտումների և Մեծ Հայքն առանց հովանավոր պետության գոյատևելու անհնարինության մեջ համոզված և պարզապես իշխանատենչների ու վրիժառուների միջև, որոնցից միայն շահում էր արտաքին թշնամին: 359 – ից հետո, երբ նորից լարվեցին Հռոմ – Պարսկաստան հարաբերությունները, Արշակն արդեն իր ուշադրությունը սևեռեց արտաքին հարցերի վրա: Այս ընթացքում, մինչև նրա դավադրական ձերբակալությունը, արդեն սակավ են դառնում տեղեկությունները Ներսեսի հետ հարաբերությունների մասին: Թերևս նրանք միասամ են եղել թշնամու դեմ պայքարում:

Ամփոփելով՝ նշենք, որ այսպիսով.

Առաջին. Արշակի գահակալության առաջին շրջանը՝ 350 – 59թթ., ընթանում են կենտրոնաձիգ պետության ստեղծման ջանքերով, քանի որ Հռոմի և Պարսկաստանի դավերի վտանգն առժամապես բացակայում էր:

Երկրորդ. Արշակի կողմից Ներսես Մեծի քահանայապետ նշանակումը նպաստում է, որպեսզի երկուսով միջոցառումների գնան՝ դարձյալ պետության ու հավատի ամրապնդման և սոցիալական խնդիրների լուծման ձգտումներով պայմանավորված:

Երրորդ. Ներսես Մեծի և Արշակի միջև հետագայում տարաձայնություններ են առաջանում, որոնք պետք է պայմանավորել քաղաքական կողմնորոշումների տարբերության և ավատատիրական հարաբերութունների ամրապնդման հանգամանքներով:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Markwart, Die Enstehung der armenishhen bistumer, Rom, 1932, էջ 88:
2. Լեո, Երկերի ժողովածու, Առաջին հատոր, Երևան, 1966, էջ 446-447:
3. Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց, Երևան, 1968, էջ 120:
4. Նույն տեղում, էջ 121:
5. Նույն տեղում:
6. Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 255;
7. Լեո, նշվ. աշխ., էջ 449:
8. Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, Կ. Պոլիս, 1912, էջ 169:
9. Մեսրոպ երէց, Պատմութիւն երջանիկ վարուց և մահվան երանելի առն Աստուծոյ Սրբոյն Մեծի Ներսէսի, Կ. Պոլիս, 1737, էջ 9:
10. Լեո, նշվ. աշխ., էջ 448:
11. Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, էջ 255:
12. Նույն տեղում, էջ 255 – 256:
13. Նույն տեղում, էջ 256:
14. Հայ ժողովրդի պատմություն, խմբ. Ստ. Տ. Մելիք Բախշյանի, Երևան, 1975, էջ 239:
15. Փավստոս, նշվ. աշխ. էջ 129:
16. Լեո, նշվ. աշխ., էջ 450:
17. Փավստոս Բուզանդ, նշվ.աշխ., էջ 165:
18. Նույն տեղում, էջ 165 – 167:
19. Մովսես Խորենացի, նշվ.աշխ., էջ 256 – 257:

20. Նույն տեղում, էջ 258:
21. Նույն տեղում, էջ 259:
22. Հակոբ Մանանդյան, Երկեր, Բ, Երևան, 1978, էջ 166:
23. Հայ ժողովրդի պատմություն, խմբ. Ստ. Տ. Մելիք Բախշյանի, էջ 240:
24. Մովսես Խորենացի, նշվ.աշխ. էջ 263:
25. Փավստոս, նշվ աշխ., էջ 160:

ԱՄՓՈՓԱԳԻՐ
Արշակ Երկրորդի կենտրոնաձիգ պետության ստեղծման քաղաքականությունը և հայոց եկեղեցին
Ավետիս Հարությունյան, Արշակ Ներսիսյան

Հոդվածում քննության են ենթարկվում Արշակ Երկրորդի կառավարման շրջանում պետություն – եկեղեցի հարաբերությունները: Այնտեղ փորձ է արվում ապացուցել, որ Արշակ Երկրորդն իր կառավարման առաջին շրջանում ամեն ինչ անում է կենտրոնաձիգ պետության ստեղծման համար: Նա նաև վերականգնում է Գրիգոր Լուսավորչի սերնդին քահանայապետի գահին՝ հանձին Ներսեսի, որի հետ ձեռնարկում է կարևորագույն խնդիրներ՝ երկրի ներքին կյանքը կարգավորելու և քրիստոնեական հավատն ամրապնդելու համար: Սակայն հետագայում նրանց միջև առաջանում են խորը տարաձայնություններ, որոնք պայմանավորված էին արտաքին և ներքին գործոններով:

РЕЗЮМЕ
Армянская церковь и политика Аршака II по созданию центростремительного государства
Аветис Арутюнян, Аршак Нерсисян

Ключевые слова: Аршак II, Нерсес Великий, Аштишатская встреча, Шапух, Армянская Церковь, Первосвященник, Рим, Персия, центростремительное государство, Аршакаван, авторитарные отношения.

В статье исследуются государственно-церковные отношения в период правления Аршака II. Делается попытка доказать, что Аршак II в первый период своего правления делал все, чтобы создать центростремительное государство. Он восстанавливает Нерсеса, потомка Григория Просветителя, на престоле первосвященника, вместе с которым выполняет важные задачи по регулированию внутренней жизни страны и укреплению христианской веры. Но позже между ними возникли глубокие разногласия, обусловленные внешними и внутренними факторами.

SUMMARY
The Armenian Church and Arshak II Policy of Creating a Centripetal State
Avetis Harutyunyan, Arshak Nersisyan

Keywords: Arshak II, Nerses the Great, Ashtishat meeting, Shapuh, Armenian Church, High Priest, Rome, Persia, centripetal state, Arshakavan, authoritarian relations.

The article examines the state-church relations during the reign of Arshak II. There is an attempt to prove that Arshak II in the first period of his rule is doing everything to create a centripetal state. He restores Nerses, a descendant of Gregory the Illuminator, on the throne of the high priest, with whom he performs important tasks in regulating the internal life of the country and strengthening the Christian faith. But later, deep disagreements arose between them, due to external and internal factors.